



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Մարտի 20

Հայր

Միտի

84
Մ-89

1902



ԳԻՒԻ ԳԸ-ՄՕՊԱՍԱՆ

19 NOV 2010

20 APR 2008

90
այ.

ՀԱՅԲ ՄԻԼՈՆԸ

5344

5344

Թարգ. ֆրանս
Ա. Տ.-Պ.



Բ Ա Գ Ո Ւ
ՏՊԱՐԱՆ ԵՂԲ. ՂԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ

1902.

04.07.2013

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

6820

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено Цензурою
15 Июня 1902 года, г. Тифлисъ.

ՀԱՅՐ ՄԻՂՈՆԸ.

Արդէն մի ամիս է, որ միջօրէի արևը իր հրատապ ճառագայթներն արձակում է դաշտերի վրայ: Տաքութեան այս տարափի տակ զուարթագին կեանքը նոր ոյժ է ստացել. գետինը անվերջ ծածկուել է դալարով: Կապոյտ է երկինքը մինչև հորիզոնի եզերքը: Հովիտում ցիր ու ցան նորմանդական ագարակները, հեռուից, փեկոնիններով շրջապատուած անտառակների են նմանում: Մօտիկից՝ երբ մարդ լետ է անում որդնկեր դուռը, թւում է թէ նրա առջև բացում է մի հսկայական անտառ, որովհետև գիւղացիների նման ոսկրացած բոլոր հինաւուրց խնձորենիները ծաղկել են: Գաւթի երկարութեամբ շարէշար տնկուած կոր ու կեռ, դարաւոր սև բունները տարածում են երկնքի տակ իրանց պլիտակ ու վարդազոյն փայլուն սաղարթները: Նրանց նորափթիթ ծաղիկներից բուրոզ մեղմ

անուշահոտութիւնը խառնուում է բաց ախոռների
ծանրաշունչ հոտի և գոլորշու հետ բորբոսնած
աղբակոյտի, որի վրայ լիքը հաւեր քջուջ են անում:

Կէս օր է: Դռան առաջ տնկուած տանձենիի
հովանու տակ ճաշում է ընտանիքը—հայրը, մայրը,
չորս երեխայ, երկու աղախին և երեք ծառայ: Ոչ
ոք չէ խօսում: Ապուրը կերան, յետոյ առաջ բերին
խոզի ճարպով տապակած գետնախնձորի բորանին:

Երբեմն-երբեմն տեղից վեր է կենում աղա-
խիններից մէկը ու գնում է մառանը մի գաւ սիգր*)
բերելու: Ընտանիքի հայրը՝ քառսուն տարեկան մի
խոշոր տղամարդ, ուշադրութեամբ դիտում է իր
տան կողմը, պատի երկարութեամբ, փեղկերի մէջ
խճճուած, օձի նման գալարուն և տերևազուրկ մի
բարունակ:

Վերջը նա ասաց. «Հօրս բարունակը այս տարի
կանուխ է սկսել բողբոջ արձակել: Թերևս պտուղ
տալ:»

Կինը նոյնպէս շուռ եկաւ և նայեց այն կող-
մը՝ առանց մի խօսք ասելու: Այս բարունակը
տնկուած է ճիշտ այնտեղ, ուր որ հայրը հրացանի
բռնուեց:

* * *

1870 թւի պատերազմի ժամանակներն էր:
Պրուսացիները տիրել էին ամբողջ երկիրը: Գենն-

*) Սիգր—տանձից կամ խնձորից պատրաստած գինի:

րալ Ֆէդհէրբը իր հիւսիսային բանակովը դիմա-
դրում էր դրանց:

Պրուսական գլխաւոր շտաբը բանակել էր այս
ազարակումը: Ազարակատէր ծերունի գիւղացին
Հայր Միլոնը—Պետրոսը, նրանց ընդունել և տեղա-
ւորել էր ինչքան որ կարողացել էր:

Մի ամսից ի վեր գերմանական առաջապահ
զօրքը հսկում էր այս գիւղում: Այդ տեղից 10 մղոն
հեռու Ֆրանսիացիներն էին բանակել, առանց տեղ-
ներիցը շարժուելու: Բայց և այնպէս ամեն գիշեր
(գերմանացի) ուլլաններ էին անլայտանում:

Շրջակաները գիտելու ուղարկուած բոլոր
պահակախմբերը, որոնք մեկնում էին երկու կամ
երեք հոգով միայն, այլևս չէին վերադառնում:
Առաւօտները նրանց գտնում էին մահացած մի
արտի մէջ, մի ազարակի պատի տակ, մի փոսի մէջ:
Նոյն իսկ նրանց ձիերը թրի հարուածով լօշոտ-
ուած՝ ճանապարհի վրայ էին ձգուած:

Այս սպանութիւնները կարծես կատարուած
լինէին միևնոյն մարդկանց ձեռքով, որոնց հետքը
սակայն գտնել չէին կարողանում:

Ժողովուրդը տեւօրի ենթարկուեց: Մի հասա-
րակ ցուցմունքի վերայ հիմնուած՝ գիւղացիներին
հրացանի էին բռնում, բանտարկում էին կանանց,
երեխաներին վախ ազդելով ուզում էին բան իմա-
նալ: Սակայն ոչինչ չիմացուեց:

Բայց ահա մի առաւօտ ծերունի Միլոնին

գտան իր ախոռում երկնցած և դէմքի վրայ մի վէրք բացուած:

Ագարակից երեք քիլոմէտր հեռու երկու փորոտուած ուլլաններ էլ գտնուեցան: Դրանցից մէկը դեռևս բռնած ունէր ձեռքին իր արիւնաթաթախ դէնքը: Նա կռուել, պաշտպանուել էր:

Իսկոյն մի զինուորական դատարան կազմուեց ագարակի առաջ, բաց երկնքի տակ: Բերին ծերունուն:

Վաթսուենութը տարեկան էր նա. կարճահասակ, նիհար, մէջքը փսքը ինչ կռացած, խեղափառի ճանգերի նման երկար ձեռքերով: Իր դրժգունած, ցանցառ և բազի ճուտի փետրիկների նման թեթև մագերի տակից երևում էր գանգի կաշին: Վզի թուխ և կնճռոտած կաշուի տակից նշմարում էին հաստ երակները, որոնք կորչում էին ծնօտի տակը և կրկին երևան էին գալիս քունքերի վրայ: Այդ կողմերումը նա յայտնի էր իբրև ժլատ մէկը, որի հետ գործ բռնելը դժուար էր:

Չորս զինուորներով շրջապատած՝ կանգնեցրին նրան խոհանոցից դուրս բերած սեղանի մօտ: Հինգ սպաներ և գնդապետը նստան նրա զիմացը: Գընդապետը սկսեց խօսել Փրանսերէն լեզուով:

— Հայր Միլոն, այստեղ եկած օրից ի վեր մենք ձեզանից միշտ գոհ ենք մնացել: Դուք շարունակ հաշուակատար և նոյն խկ ուշադիր էք եղել դէպի մեզ: Սակայն այսօր մի սարսափելի մեղադրանք է

ծանրանում ձեզ վրայ և անհրաժեշտ է որ խնդիրը պարզուի: Ի՞նչպէս ստացաք ձեր դէմքի վրայի վէրքը:

Գիւղացին ոչինչ չպատասխանեց:

Գնդապետը շարունակեց.

— Ձեր լուսթիւնը, հայր Միլոն, դատապարտում է ձեզ: Բայց ես կամենում եմ, որ դուք պատասխանէք, հասկանո՞ւմ էք: Գիտէք թէ ով է սպանել այս առաւօտ Կալվէրի մօտ գտնուած այն երկու ուլլաններին:

Ծերունին որոշակի կերպով արտասանեց.

— Ե՛ս:

Գնդապետը, զարմացած, լուց մի վալրկեան, աչքերը կալանաւորին շողած: Ծերունի Միլոնը մնաց անդրդուելի, գիւղացուն յատուկ իր բիրտ արտայայտութեամբ, աչքերը խոնարհած՝ կարծես թէ իր խոստովանահօր առջևը լինէր կանգնած: Միայն մի բան ցոյց էր տալիս նրա ներքին յուզմունքը—նա անդադար իրար ետեկից կուլ էր տալիս իր թուքը՝ զգալի ճիգ թափելով, կարծես թէ նրա կոկորդը ամբողջովին սեղմուած լինէր:

Ողորմելու ընտանիքը—իր որդի ծանր, հարսը և երկու փոքր երեխաները զարհուրած և ապուշ կտրած կանգնել էին տասը քայլ հեռուն, լետեր:

Գնդապետը շարունակեց.

— Գիտէք նոյնպէս թէ ով է սպանել մեր բանակի բոլոր պահնորդ զինուորիկներին, որոնց մի նամսից ի վեր ամեն առաւօտ դաշտերի մէջն ենք

գտնուծ:

Ծերունին պատասխանեց միևնոյն սառն անտարբերութեամբ.

— Ես:

— Դուք էք այդ ամենին սպանել:

— Իհարկէ, այո՛, ես ինքս եմ արել:

— Դուք միայնակ:

— Միայն ես:

— Պատմեցէք թէ այդ ինչպէս էիք անուծ:

Այս անգամ մարդը կարծես զգածուեց: Երկար խօսելու կարիքը ակնյայտնի կերպով նրան անհանգստացնում էր: Նա կմկմաց.

— Ես ինչ գիտեմ: Անուծ էի ինչպէս որ պատահում էր:

Գնդապետը շարունակեց.

— Ձգուշացնում եմ ձեզ, որ դուք պարտաւոր էք ասել ինձ ամեն բան: Ուրեմն լաւն այն է, որ համաձայնէք անյապաղ յայտնել ձեր գիտցածը: Ինչպէս էք սկսել:

Մարդը մի անհանգիստ հայեացք ձգեց իր ետևը ուշադիր կանգնած ընտանիքի վրայ: Նա էլի մի բոպէ վարանեց, լեռոյ լանկարձ վճռողական կերպով սկսեց խօսել:

— Ձեր այստեղ գալու լաջորդ օրը, երեկոյեան մօտ ժամի 10-ին վերադառնում էի տուն: Դուք և ձեր զինուորները խլել էիք ինձանից ամենաքիչը 50 ոսկու ապուռ (գարման, ֆուրած), մի կով և

երկու գառը: Ես ասացի մտքուծա. ինչքան սրանք ինձանից խլելու լինեն, այնքան աւելի թանգ պիտի նստեցնեմ իրենց: Բացի դրանից ուրիշ բան էլ ունէի սրտիս վրայ ծանրացած, որը ես կասեմ ձեզ: Եւ ահա, ես նկատում եմ ձեր զինուորներից մէկին, որը մարագիս ետևը ջրամբարի եզերքը նստած, իր չիպուխն էր ծխում: Գնացի վերցրի պատից կախած գերանդիս, և ոտքիս ծայրերի վրայ վերադարձայ այնպէս կամաց, որ նա ամենևին չը լսեց: Եւ նրա գլուխը կտրեցի մի հարուածով, միայն մի հարուածով, ինչպէս մի հասկ, այնպէս որ չը կարողացաւ նոյնիսկ «օֆ» կանչել: Եթէ փնտռելու լինէք, նրան կըգտնէք լճակի յատակը, ածուխի տուղրակի մէջ, վզին մի մեծ քար կապած:

Ես իմ պատճառն ունէի: Հանեցի նրա բոլոր հագուստը, կոշիկից սկսած մինչև գոգար և թագցրի գաճի քուրայի մէջ, որը գտնուում է ագարակիս ետևի Մարտէն կոչուած անտառակում:»

Ծերունին լռեց: Սպաները, շփոթուած, իրար երեսն էին նայում: Հարց ու փորձը վերսկսուեց և ահա թէ ինչ իմացան նրանք:

* * *

Մի անգամ սպանութիւնը կատարելուց լեռոյ գիւղացին միայն մի մտածմունք ունէր.

« Կոտորել պրուսացիներին »:
Նա նրանց ատում էր մի գաղտնի և գառնա-

ցած ատելութեամբ, ինչպէս վայել է մի ազահ և միւննոյն ժամանակ հայրենասէր գիւղացուն: Նա իր «պատճառն ունէր», ինչպէս ինքն էր ասում: Մի քանի օր սպասեց:

Նրան թողնում էին ազատօրէն տուն ու դուրս անել: գնալ ու գալ իր սրտի ուզածին չափ, այնքան նա խոնարհ, հնազանդ և հաճոյակատար էր ձեւացել յաղթողների առաջ: Արդ, նա տեսնում էր թէ ինչպէս ամեն երեկոյ լրաբերներ են մեկնում դէպի գանազան կողմեր. լսելով այն գիւղի անունը, ուր ձիւաւորները գնալու էին մի գիշեր, ինքն էլ դուրս եկաւ տանիցը. իրեն հարկաւոր գերմաններէն մի քանի խօսքն էլ սովորել էր զինուորների հետ յարաբերութիւն ունենալով:

Նա ազարակից դուրս եկաւ, կամացուկ սողաց դէպի անտառակը, հասաւ գածի քուրան, իջաւ ներքնուղու լատակը և գետնի վրայ գտնելով սպանուածի շորերը՝ հագաւ:

Այնուհետև սկսեց թափառել դաշտերը, փորսող տալով, թագնուելու համար խրամներ փրնտուելով, ամենաչնչին շուկին անգամ ականջ դնելով, գողի նման սրտատրոփ:

Երբ ժամը հասած համարեց, մօտեցաւ ճանապարհին և թագնուեց մի մացառի մէջ: Նա դարձեալ սպասեց: Աերջապէս, կէս գիշերուայ դէմ, ճանապարհի կոշտ գետնի վրայ լսելի եղաւ ձիու ոտների զրփիւն: Գիւղացին իր ականջը գետնին

կայրեց, որ հաստատ իմանայ, թէ եկողը մի ձիւոր էր միայն. ապա ինքն էլ պատրաստուեց:

Ուլանը ընթանում էր սրարշաւ, հետը հեռագրալուրեր տանելով: Նա արշաւում էր աչքերը լայն բաց արած, ականջները սրած: Երբ հագիւտասը քայլ էր մնացել որ հասնէր, ծերունի Միլոնը փռուեց ճանապարհի վրայ, վայնասուն բարձրացնելով, «Hilfe! Hilfe! օգնութիւն, օգնութիւն:» Զիւաւորը կանգ առաւ. նրան ձիուց ընկած և վիրաւորուած գերմանացու տեղ ընդունելով ցած իջաւ, առանց որ և է կասկածի մօտ գնաց և անձանօթի վրայ կուացած րօպէին ստացաւ ուղիղ փորի մէջ տեղը երկար ու կեռ սուրի հարուածը: Նա ընկաւ առանց հոգեվարքի, վերջնական մի քանի ցնցումներ միայն անելով:

Յետոյ վեր կացաւ նորմանդացին, հրճուած ծեր գիւղացուն վայել լուռ ու մունջ ուրախութեամբ, և հէնց հաճոյքի համար կտրեց գիակի կոկորդը: Ապա քաշ տուեց նրան մինչև ջրամբարը և ձգեց մէջը:

Ձին հանդարտ իր տիրոջն էր սպասում. ծերունի Միլոնը թամբի վրայ բարձրացաւ և դաշտերի միջով սրարշաւ քշեց:

Մի ժամից յետոյ նա նորից երկու ուլան նկատեց, որոնք կողք-կողքի բանակն էին վերադառնում: Նա ուղղակի նրանց վրայ գնաց, դարձեալ «Hilfe! Hilfe! օգնութիւն, օգնութիւն» գոչելով:

Պրուսացիները թող տուին նրան մօտենալ առանց որևէ կասկածանքի, որովհետև ճանաչեցին համազգեստը: Եւ ահա նա, ծերունին, թնթանօթի ուսմբի նման անցաւ նրանց մէջտեղից, ատրճանակի և թուրի հարուածով թէ մէկին և թէ միւսին գետին տապալելով:

Ապա նա յօշոտեց ձիերը, գերմանական ձիերը: Յետոյ նա կամացուկ դարձաւ գաճի քուրան և մուտք ներքնուղու խորքում թագցրեց իր ձին: Թողեց այնտեղ իր համազգեստը, կրկին իր ցնցոտիները հագաւ և իրեն մինչև անկողինը ձգելով, քնեց մինչև առաւօտ:

Չորս օր շարունակ անից դուրս չելաւ, սկըտուած քննութեան վախճանին սպասելով. բայց հինգերորդ օրը դարձեալ դուրս գնաց և նոյն խորամանկութեամբ էլի երկու գինուոր սպանեց: Այն օրից սկսած գագար չուէր այլևս: Ամեն գիշեր թափառում էր և արկածներ որոնում, պրուսացիներին երբեմն այստեղ, երբեմն այնտեղ սպանելով, լուսնկալ գիշերով արշաւում էր ամայի դաշտերը իբրև մոլորուած ուլան, իբրև մարդկանց օրսորդ: Վերջը, զօրժն աւարտելուց յետոյ՝ իր ետևը թողնելով ճանապարհի երկարութեամբ վեր ընկած դիակները, ծերունի հեծուորը վերագառնում էր գաճի քուրան՝ սրա խորքերումը իր ձին և համազգեստը թագցնելու համար:

Կէս օրին մօտ նա բոլորովին հանդարտ կեր-

պարանք շինած դուրս էր գնում իր ձիուն վարսակ և ջուր տանելու համար: Նրան առատօրէն կերակրում էր, պահանջելով ծանրատար աշխատանք:

Սակայն նախընթաց գիշերը, նրանցից մէկը՝ որոնց վրայ յարձակուել էր ծերունին, զգուշ էր գտնուել և սրի մի հարուած էր հասցրել գիւղացու դէմքին:

Բայց և այնպէս ծերուկը երկուսին էլ սպանել էր: Նա դարձել էր կրկին, պահել ձին և հագել իր պատառոտուն շորերը: Բայց ճանապարհին թուլութիւն էր զգացել և քաշ գալով հագիւ մինչև աստուծ էր գնացել, տունը հասնել չկարողանալով: Նրան գտել էին այնտեղ բարձրովին արևնաշաղախ, յարդի վրայ ընկած...

* * *

Իր պատմութիւնը աւարտելուց յետոյ լանկարծ գլուխը վեր բարձրացրեց և հպարտօրէն պրուսացի սպաներին նայեց:

Գնդապետը՝ որն իր բեխերն էր ոլորում, հարցրեց նրան.

— Գուք այլևս ոչինչ չուէք ասելու:

— Ո՛չ, աւելի ոչինչ. հաշիւը ուղիղ է — ես սպանել եմ 16 հոգի, ոչ աւելի, ոչ պակաս:

— Գիտէք, որ իսկոյն պէտք է մեռնէք:

— Ձեզանից ես շնորհ չեմ խնդրել:

— Զինուոր եղել էք:

— Այ՛ն. ժամանակին ես էլ եմ եղել պատերազմումը: Եւ յետոյ. դուք էք սպանել Տօրս, որ Առաջին Կայսեր զինուորն էր. ի նկատի ունեցէք նաև, որ դուք սպանեցիք իմ կրտսեր որդուն, Փրանսուալին, անցեալ ամիսը, Էվրէօ-ի մօտ: Ես ձեզ պարտական էի, և ես վճարեցի: Մենք ալլևս հաշիւ չունենք իրար հետ:

Սպաները իրար էին նայում:

Ծերուկին շարունակեց.

— Ութը հոգի հօրս փոխարէն, ութն էլ որդուս փոխարէն: Ես հաշիւս մաքրեցի: Ես, ես չէի որ եկայ ձեզ հետ կռուելու: Ես ձեզ չեմ ճանաչում: Նոյն իսկ չեմ իմանում, թէ որտեղից եկաք: Ահա դուք իմ տանն էք և հրամայում էք այնպէս, կարծես թէ ձեր տանը լինէիք: Ես միւսներից իմ վրէժը լուծեցի: Ես ամենևին չեմ գղջում:

Եւ իր կորացած իրանը ուղղելով, խաչեց իր թևերը, մի խոնարհ հերոսի դիրք ընդունելով:

Պրուսացիները երկար ժամանակ ցած ձայնով իրար հետ խօսակցեցին: Մի հարիւրապետ, որը նոյնպէս նախնիքաց ամսին կորցրել էր իր որդուն, պաշտպանում էր այս արիասիրտ շրջմոլիկին:

Այդ ժամանակ զնդապետը վեր կացաւ և մօտենալով հայր Միլոնին, ցած ձայնով ասաց:

— Լսեցէք, ծերուկի, մի միջոց կայ թերևս ձեր կեանքը փրկելու, այն է որ...

Բայց ծերուկը չէր լսում ալլևս, և իր աչքերը

ա՛ղ խղիօղ սպայի վրայ սևեռած, մինչդեռ քամին ծածանում էր նրա գլխի ցանցառ մագերը, մի սարսափելի կերպարանք շինեց, որից նրա նիհար, ամբողջովին վէրքով ծածկուած դէմքը կձկուեց և ուռցնելով իր կուրծքը, նա թքեց ամբողջ ուժով ուղիղ պրուսացու երեսին:

Գնդապետը, կատաղած, բարձրացրեց ձեռքը, իսկ զիւղացին թքեց նրա երեսին երկրորդ անգամ: Բոլոր սպաները միանգամից վեր թռան և գոռալով պահանջում էին նրա մահը:

Մի ակնթարթում զիւղացուն, որը շարունակ անխուով կանգնած էր, պատին կայցրին և հրացանի բռնեցին, մինչդեռ նա ժպիտներ էր ուղղում իր անդրանիկ որդի ժանին, իր հարսին և երկու փոքրիկներին, որոնք դիտում էին սարսափահար եղած:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

« Ազգային գրադարան



NL0303274

6820